ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-786-28.02.2024-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1	***Կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 8-րդ մասը թողնել անփոփոխ, իսկ նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին մասով՝ «8.1. Բացառիկ դեպքերում, քրեական վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու նպատակով, գլխավոր դատախազն իրավասու է նաև իր որոշմամբ փոխել քրեական վարույթի՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական ենթակայության կանոնները, եթե քրեական վարույթը փաստական	Ընդունվել է:	Ընդունվել է :

			հանգամանքներով կապված է նախաքննության մեկ այլ մարմնի վարույթում քննվող 2 քրեական վարույթի հետ, կամ քրեական վարույթը նախաձեռնվել է նախաքննական մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող նախաքննության ընթացքում հայտնաբերված ենթադրյալ՝ այլ քննչական մարմնին ենթակա հանցագործության հատկանիշներով, սակայն փաստական հանգամանքներով կապված է վարույթը նախաձեռնած քննիչին ենթակա վարույթի հետ կամ նույն հիմքով միացվել է այդ վարույթին:»:		